**«ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ԷԷՀՕ-ԳՀԾՁԲ-25/17-1-1**

ք. Երևան «20» 01 2026թ.

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ը ի դեմս գլխավոր տնօրենի պ/կ՝ Մ. Պիրադյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Ա. Դադունցի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 187,000.00 (հարյուր ութսունյոթ հազար) ՀՀ դրամ, Կատարողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև հանձման-ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալուօրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.16, N 1.18, N 1.23, N 1.24, N 2, N 3, N 3.1

և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ | «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Աբովյան 27 | ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 16 |
| «Արդշինբանկ» ՓԲԸ | «Արդշինբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 2474600497000000 | ՀՀ 2470100507450000 |
| ՀՎՀՀ 01547732 | ՀՎՀՀ 02574465 |
| Գլխավոր տնօրենի պ/կ ________ Մ. Պիրադյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | Գլխավոր տնօրեն՝ ________ Ա. Դաղունց<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված N 1
«____» ________________ 2026թ. կնքված
ԷէՀՕ-ԳՀԾՁԲ-25/17-1 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Ծառայության | | | | | | Մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | հատկանիշները (տեխնիկական բնութագիր) | չափման միավորը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը* |
| 16 | 66511170/17 | Փոխադրամ իջոցների հետ կապված ապահովագ րական ծառայությու ններ /ՈՒԱՁ 2206/ | Կատարողը պարտավոր է իրականացնել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի ամրացված ՈՒԱՁ 2206 տրանսպորտային միջոցի (թվով 1 հատ) համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված ավտոտրանսպորտային մ միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ ծառայություն)՝ ըստ կից ներկայացված Հավելված 1.16-ի: Ապահովագրության ժամկետը՝ գործող ԱՊՊԱ պայմանագրերի ավարտման ժամկետից սկսած 365 օրացուցային օր: Մեքենայի ապահովագրության պայմանագիրը մտնելու է ուժի մեջ գործող պայմանագրի ավարտին հաջորդող օրը: | դրամ | 55,000.00 | 1 | ՀՀ, ք. Երևան | Պայմանագիրն ուժի մեջ է մտնում գործող պայմանագրի ավարտին հաջորդող օրվանից՝ 1 տարի ժամկետով |
| 18 | 66511170/19 | Փոխադրամ իջոցների հետ կապված ապահովագ րական ծառայությու ններ /ՈՒԱՁ 330/ | Կատարողը պարտավոր է իրականացնել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի ամրացված ՈՒԱՁ 330 տրանսպորտային միջոցի (թվով 1 հատ) համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված ավտոտրանսպորտային մ միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ ծառայություն)՝ ըստ կից ներկայացված Հավելված 1.18-ի: Ապահովագրության ժամկետը՝ գործող ԱՊՊԱ պայմանագրերի ավարտման ժամկետից սկսած 365 օրացուցային օր: Մեքենայի ապահովագրության պայմանագիրը մտնելու է ուժի մեջ գործող պայմանագրի ավարտին հաջորդող օրը: | դրամ | 39,000.00 | 1 | ՀՀ, ք. Երևան | Պայմանագիրն ուժի մեջ է մտնում գործող պայմանագրի ավարտին հաջորդող օրվանից՝ 1 տարի ժամկետով |
| 23 | 66511170/24 | Փոխադրամ իջոցների հետ կապված ապահովագ րական | Կատարողը պարտավոր է իրականացնել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի ամրացված ՈՒԱՁ 2294 տրանսպորտային միջոցի (թվով 1 հատ) համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված ավտոտրանսպորտային մ միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր | դրամ | 55,000.00 | 1 | ՀՀ, ք. Երևան | Պայմանագիրն ուժի մեջ է մտնում գործող պայմանագրի ավարտին հաջորդող օրվանից՝ 1 տարի ժամկետով |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ծառայություններ /ՈՒԱԶ 2294/ | ապահովագրություն (ԱՊՊԱ ծառայություն)՝ ըստ կից ներկայացված Հավելված 1.23-ի: Ապահովագրության ժամկետը՝ գործող ԱՊՊԱ պայմանագրերի ավարտման ժամկետից սկսած 365 օրացուցային օր: Մեքենայի ապահովագրության պայմանագիրը մտնելու է ուժի մեջ գործող պայմանագրի ավարտին հաջորդող օրը: | | | | | |
| 24 | 66511170/25 | Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ /ՈՒԱԶ 3962/ | Կատարողը պարտավոր է իրականացնել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի ամրացված ՈՒԱԶ 3962 տրանսպորտային միջոցի (թվով 1 հատ) համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված ավտոտրանսպորտային մ միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ ծառայություն)՝ ըստ կից ներկայացված Հավելված 1.24-ի: Ապահովագրության ժամկետը՝ գործող ԱՊՊԱ պայմանագրերի ավարտման ժամկետից սկսած 365 օրացուցային օր: Մեքենայի ապահովագրության պայմանագիրը մտնելու է ուժի մեջ գործող պայմանագրի ավարտին հաջորդող օրը: | դրամ | 38,000.00 | 1 | ՀՀ, ք. Երևան | Պայմանագիրն ուժի մեջ է մտնում գործող պայմանագրի ավարտին հաջորդող օրվանից՝ 1 տարի ժամկետով |
| **Ընդամենը՝** | | | | | **187,000.00** | | | |

* Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

**Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվելու է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Աբովյան 27
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474600497000000
ՀՎՀՀ 01547732

Գլխավոր տնօրենի պ/կ ____________ Մ. Պիրումյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 16
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2470100507450000
ՀՎՀՀ 02574465

Գլխավոր տնօրեն՝ ____________ Ա. Դաղունց
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 1.16*
*«____» __________________ 2026թ. կնքված*
*ԷԷՀՕ-ԳՀԾՁԲ-25/17-1 ծածկագրով պայմանագրի*

# ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
/ՈՒԱԶ 2206/

| № | Մակնիշը | Թողարկման տարեթիվ | Նույնականացման համարը | Ձիաուժ |
|---|---|---|---|---|
| 1 | ՈՒԱԶ 2206 | 2007 | 668 AT 61 | 99 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Աբովյան 27
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474600497000000
ՀՎՀՀ 01547732

Գլխավոր տնօրենի պ/կ ________________ Մ. Պիրադյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 16
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2470100507450000
ՀՎՀՀ 02574465

Գլխավոր տնօրեն՝ ________________ Ա. Դաղունց
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 1.18*
*«____» ________________ 2026թ. կնքված*
*ԷԷՀՕ-ԳՀԾՁԲ-25/17-1 ծածկագրով պայմանագրի*

# ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
/ՈՒԱԶ 330/

| № | Մակնիշը | Թողարկման տարեթիվ | Նույնականացման համարը | Ձիաուժ |
|---|---|---|---|---|
| 1 | ՈՒԱԶ 330 | 2008 | 669 AT 61 | 99 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Աբովյան 27
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474600497000000
ՀՎՀՀ 01547732

Գլխավոր տնօրենի ալ ______________ Մ. Պիրումյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 16
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2470100507450000
ՀՎՀՀ 02574465

Գլխավոր տնօրեն՝ ______________ Ա. Դաղունց
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 1.23*
*«____» __________________ 2026թ. կնքված*
*ԷԷՀՕ-ԳՀԾՁԲ-25/17-1 ծածկագրով պայմանագրի*

## ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
/ՈՒԱՋ 2294/

| № | Մակնիշը | Թողարկման տարեթիվ | Նույնականացման համարը | Ձիաուժ |
|---|---|---|---|---|
| 1 | ՈՒԱՋ 2294 | 2008 | 130 OU 64 | 99 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Աբովյան 27
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474600497000000
ՀՎՀՀ 01547732

Գլխավոր տնօրենի պ/կ՝ ------------------ Մ. Պիրադյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 16
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2470100507450000
ՀՎՀՀ 02574465

Գլխավոր տնօրեն՝ ------------------ Ա. Դաղունց
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 1.24*
*«____» _________________ 2026թ. կնքված*
*ԷԷՀՕ-ԳՀԾՁԲ-25/17-1 ծածկագրով պայմանագրի*

**ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
/ՈՒԱԶ 3962/

| № | Մակնիշը | Թողարկման տարեթիվ | Նույնականացման համարը | Ձիաուժ |
|---|---|---|---|---|
| 1 | ՈՒԱԶ 3962 | 1998 | 949 OT 61 | 75 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Աբովյան 27
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474600497000000
ՀՎՀՀ 01547732

Գլխավոր տնօրենի պ/կ ______________ Մ. Պիրադյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 16
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2470100507450000
ՀՎՀՀ 02574465

Գլխավոր տնօրեն՝ ______________ Ա. Դաղունց
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 2*
*«____» ________________ 2026թ. կնքված*
*ԷՀԵՕ-ԳՀԾՁԲ-25/17-1 ծածկագրով պայմանագրի*

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | անվանումը | չ/մ | ընդհանուր քանակը | վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ.՝ ըստ ամիսների, այդ թվում՝** | | | | | | | | | | | | Ընդհանուր գինը |
| | | | | | 2026թ. | | | | | | | | | | | | |
| | | | | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | |
| 16 | 66511170/17 | Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ /ՈՒԱՀ 2206/ | դրամ | 1 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 |
| 18 | 66511170/19 | Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ /ՈՒԱՀ 330/ | դրամ | 1 | 39,000.00 | 39,000.00 | 39,000.00 | 39,000.00 | 39,000.00 | 39,000.00 | 39,000.00 | 39,000.00 | 39,000.00 | 39,000.00 | 39,000.00 | 39,000.00 | 39,000.00 |
| 23 | 66511170/24 | Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ /ՈՒԱՀ 2294/ | դրամ | 1 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 | 55,000.00 |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | 66511170/25 | Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ /ՈՒԱՁ 3962/ | դրամ | 1 | 38,000.00 | 38,000.00 | 38,000.00 | 38,000.00 | 38,000.00 | 38,000.00 | 38,000.00 | 38,000.00 | 38,000.00 | 38,000.00 | 38,000.00 | 38,000.00 | 38,000.00 |
| **Ընդամենը՝** | | | | | | | | | | | | | | | | | 187,000.00 |

* Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի հրապարակված փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

**Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվելու է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Աբովյան 27
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474600497000000
ՀՎՀՀ 01547732

Գլխավոր տնօրենի պ/կ՝ ______________ Մ. Պիրադյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 16
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2470100507450000
ՀՎՀՀ 02574465

Գլխավոր տնօրեն՝ ______________ Ա. Դադունց
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*«____» _________________ 2026թ. կնքված*
*ԷէՀՕ-ԳՀԾՁԲ-25/17-1 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
_______________________________
_______________________________
գտնվելու վայրը _____________
հհ ________________________
հվհհ _______________________

Պատվիրատու
_______________________________
_______________________________
գտնվելու վայրը _______________
հհ________________________
հվհհ________________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«    » «            » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » «        » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_______________________
ստորագրություն
_______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_______________________
ստորագրություն
_______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«____» ________________ 2026թ. կնքված*
*ԷԷՀՕ-ԳՀԾՁԲ-25/17-1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ___________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ____________________
համարը պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2026թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«____» ________________ 2026թ. կնքված*
*ԷԷՀՕ-ԳՀԾՁԲ-25/17-1 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

__________ֆինանսական գործակալի անվանումը___________ հայտնում է, որ.

1. ____պատվիրատուի անվանումը___-ի և ________կատարողի անվանումը_____-ի միջև «----» ___________ 2026թ. Կնքված «---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և __կատարողի անվանումը__________-ի միջև «----» ___________ 2026թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____________________________________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_______________
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 2026թ.